2021-2022 ուստարվա

11-րդ ա դասարանի դասղեկի տարեկան

Հաշվետվություն

Մինչ ուսումնական պրոցեսի սկսվելը կարգի եմ բերել դասասենյակները, կատարել եմ դասագրքերի բաշխում: Մշտապես կատարել եմ աշակերտների հաշվառում, տեղեկացել բացակայությունների պատճառներին, սահմանել եմ վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ՝ աշխատանքներ տարել ժամանակին կանխելու դրանք:

Դասարանների հետ միասին մասնակցել եմ գիտելիքի օրվա միջոցառմանը, դպրոցի ձևավորմանը:

Տարեսկզբին դասարանում կազմել եմ հերթապահության և դասացուցակի պատի թերթեր, ընտրել դասարանի ավագ, ավագի օգնականներ և սանիտարներ: Անցկացրել եմ ծնողական ժողովներ, ծնող-ուսուցիչ հանդիպումներ, անհատական հանդիպումներ ծնողների հետ՝ կապված երեխայի ուսումնադաստիարակչական տարբեր հարցերի հետ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության համար մշտապես համագործակցել եմ դասավանդող բոլոր ուսուցիչների հետ:

Տոների, հիշատակի օրերին ընդառաջ դասղեկի ժամերը հատկացրել եմ դրանց, կազմել ենք պատի թերթեր: Անցկացրել եմ աշակերտական ժողովներ՝ լսելու աշակերտների կարծիքներն ու առաջարկությունները այս կամ այն հացերի վերաբերյալ, պարզելու և լուծելու տարաբնույթ հարցեր ու խնդիրներ:

Տարվա ընթացքում տնօրինությանը ներկայացրել եմ սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն: Իրականացրել եմ դասարանի համար սահմանված գործավարությունը:

Տարբեր աշակերտների համար ուսումնադաստիարակչական տարբեր աշխատանքներ և միջոցառումներ եմ ձեռք առել՝ համագործակցելով տնօրենի և տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի հետ:

Դասարանի հետ նոյեմբերին այցելել ենք Մոսկվա կինոթատրոն և սրճարան: Դասարանը հոկտեմբերի 24-ին մասնակցել է հասարակագիտություն առարկայից Առաջին անգամ ընտրող ծրագրին , ապրիլի 23-ին այցելել ենք Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և ցեղասպանության թանգարան , մարտի 30-ին հասարակագիտություն առարկայից Արմեն Տոնյանը և Անահիտը Գրիգորյան ներկայացրել են նախագծային աշխատանք դիվանագիտություն թեմայով, ապրիլի 29-ին Արմեն Տոնյանը քաղաքացու օրվան ընդառաջ այց է կատարել ՀՀ ԱԺ: Տարեվերջյան գիտաճանաչողական էքսկուրսիան կազմակերպել ենք Գյումրի :

Դասրանը սեպտեմբերի 27-ին մասնակցել է մոմվառության՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմի զոհերի, այնուհետև՝ Աբովյանի պանթեոն, դեկտեմբերի 7-ին այցելել է 1988թ-ի երկրաշարժի զոհերի նվիրված հուշակոթող, ապրիլի 30-ին մասնակցել է համապետական շաբաթօրյակին :

Դասարանի Առաջադիմությունը

Տարեսկիզբ -30 աշակերտ
Տարեվերջ -30 աշակերտ
Գերազանցիկ 2, 3 հարվածային, 25 միջակ
Առաջադիմություն-97%
Որակ- 17%

Դասղեկ՝ Լ.Մեջլումյան